ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/19/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **9 փետրվարի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի, 2026 թվականի փետրվարի 9-ին քննելով «Հանրապետություն» կուսակցության ղեկավար մարմնի անդամ Գևորգ Արմենակի Խաչատրյանի կողմից Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի 2023 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/19/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ Կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամների 2023 թվականի պաշտոնեական

պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ «Հանրապետություն» կուսակցության ղեկավար մարմնի անդամ Գևորգ Արմենակի Խաչատրյանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի նոյեմբերի 7-ին և նոյեմբերի 13-ին թիվ 01/4293/39-2025 գրությունը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, ուղարկվել է Գևորգ Խաչատրյանին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Միաժամանակ, Գևորգ Խաչատրյանը ծանուցվել է, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 09:00-ին, ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը Գևորգ Խաչատրյանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և հիշյալ ժամկետում չի լրացրել Հայտարարագիրը՝ ծանուցումը 2025 թվականի նոյեմբերի 25-ին փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով ուղարկվել է Գևորգ Խաչատրյանի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով:

Նշված ծանուցումը 2025 թվականի դեկտեմբերի 2-ին տեղադրվել է հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում և Գևորգ Խաչատրյանը օրենքի ուժով 2025 թվականի դեկտեմբերի 13-ին համարվել է պատշաճ ծանուցված: Սակայն, ծանուցված համարվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Գևորգ Խաչատրյանը համապատասխան հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2026 թվականի հունվարի 13-ին պատշաճ ծանուցված Գևորգ Խաչատրյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 5/26 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունվարի 9-ին թիվ 01/37/2-2026 գրությամբ Գևորգ Խաչատրյանին ծանուցում է ուղարկվել, որ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիման վրա 2026 թվականի հունվարի 29-ին ժամը՝ 11:20-ին իրականացվելու է գործի քննություն: Նշված փոստային ծանուցումը Հանձնաժողով է վերադարձվել 2026 թվականի հունվարի 14-ին՝ տեղափոխված նշումով (հիմք՝ [redacted] փոստային հետադարձ առաքանին, ետ վերադարձ՝ CN 15)

1.5 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունվարի 20-ին թիվ 01/136-2-2026 գրությամբ Գևորգ Խաչատրյանին ծանուցում է ուղարկվել, որ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա 2026 թվականի հունվարի 29-ին նշանակված քննության օրը տեղափոխվել է և նշանակվել 2026 թվականի փետրվարի 9-ին ժամը՝ 11:40-ին: Նշված փոստային ծանուցումը Հանձնաժողով է վերադարձվել 2026 թվականի հունվարի 22-ին *տեղափոխված* նշումով (հիմք՝ [redacted]փոստային հետադարձ առաքանին, ետ վերադարձ՝ CN 15):

1.6 Հաշվի առնելով այն, որ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվել է Գևորգ Խաչատրյանին, սակայն ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել այն ստանալու մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի 15-րդ մասը՝ ծանուցումը 2026 թվականի փետրվարի 3-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում, որից հետո՝ հինգերորդ օրը, ծանուցումը համարվել է հանձնված (ստացված): Միաժամանակ, նշված ծանուցումը՝ N 01/247-2026 գրությամբ, ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարին:

1.7 2026 թվականի փետրվարի 4-ի թիվ 01/646 գրությամբ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարը Հանձնաժողովին հայտնել է, որ «[redacted] բնակարանում Գևորգ Արմենակի Խաչատրյանը չի բնակվում»:

1.8 2026 թվականի փետրվարի 09-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Գևորգ Խաչատրյանի

բացակայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Գևորգ Խաչատրյանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/19/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Գևորգ Խաչատրյանը 17.08.2022թ.-ից մինչև 23.05.2023թ.-ը հանդիսացել է «Հանրապետություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

3.2 «Հանրապետություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Գևորգ Խաչատրյանը Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.3 Գևորգ Խաչատրյանի կողմից Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ Գևորգ Խաչատրյանի Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

VI. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները**, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ՝ նաև հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (...):

4.2 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, (...):

4.4 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.5 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են պետության անվտանգության ապահովման, կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրապետություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Գևորգ Խաչատրյանը Սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ կրել է Հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն, սակայն Օրենքով նախատեսված Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա Հանձնաժողով չի ներկայացրել, այն է՝ թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Տվյալ դեպքում պարզվել է, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Գևորգ Խաչատրյանը 17.08.2022թ.-ից մինչև 23.05.2023թ.-ը հանդիսացել է «Հանրապետություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ, հետևաբար՝ Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 2-ին մասի համաձայն հանդիսացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել Կուսակցությունների գործունեության թափանցիկության ամբողջականությունը և

բացառելու կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի առանձին անդամներին ֆինանսավորելու միջոցով կամ նրանց անունով գույքի ձևակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելը՝ այդպիսով ապահովելով կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկությունը և վերջիններիս անկախությունը մասնավոր շահերից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Հանրապետություն» կուսակցության ղեկավար մարմնի անդամ Գևորգ Խաչատրյանը ենթակա է վարչական պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

«Հանրապետություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Գևորգ Խաչատրյանը Սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ կրել է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի 2023 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն:

Ընդ որում, Գևորգ Խաչատրյանը մինչև գործի քննության օրը չի ներկայացրել Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ խաթարվել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Սահմանադրական

օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Հանձնաժողովի կողմից 2026 թվականի փետրվարի 9-ի թիվ ՎԻՎ/19/2026 որոշմամբ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի 2023 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Գևորգ Արմենակի Խաչատրյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Արմենակի Խաչատրյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**